«Շիրակի ճարտարապետությունը հնագույն շրջանից մեր օրերը» միջազգային 2-րդ ամառային դպրոց

2026 թվականի հուլիսի 13–19-ը հաջողությամբ անցկացվեց «Շիրակի ճարտարապետությունը հնագույն շրջանից մեր օրերը» միջազգային 2-րդ ամառային դպրոցը, որի նպատակն էր համախմբել Հայաստանի և արտերկրի երիտասարդ հետազոտողներին, ճարտարապետներին, հնագետներին և մշակութային ժառանգության ոլորտի մասնագետներին՝ Շիրակի պատմաճարտարապետական ժառանգության ուսումնասիրման, փաստագրման, պահպանության և հանրահռչակման շուրջ։

Յոթօրյա ծրագրի ընթացքում իրականացվեցին փոխկապակցված լսարանային և դաշտային աշխատանքներ, որոնք համատեղեցին տեսական ուսուցումը, գործնական ուսումնասիրությունները և նախագծային մտածողության զարգացումը։ Դասախոսությունների շրջանակում ներկայացվեցին Շիրակի պատմության և ճարտարապետության զարգացման հիմնական փուլերը՝ հնագույն շրջանից մինչև մեր օրերը, միջնադարյան և նոր շրջանի ճարտարապետության առանձնահատկությունները, հայկական ճարտարապետության խորհրդաբանական համակարգը, ինչպես նաև մշակութային ժառանգության պահպանության և վերականգնման ժամանակակից տեսական ու գործնական սկզբունքները։ Առանձին դասախոսություններով ներկայացվեցին նաև Իտալիայի վերականգնողական փորձը, Անի Պեմզա բնակավայրի պահպանության և զարգացման հայեցակարգը, «Զորաց Քարեր» հնավայրի ամրակայման, Վահանավանքի Սուրբ Աստվածածին կրկնահարկ դամբարան-եկեղեցու վերականգնման և այլ իրականացված գիտագործնական նախագծերի արդյունքները։

Ծրագրի կարևոր բաղադրիչը դաշտային ուսումնասիրություններն էին, որոնք կազմակերպվեցին Շիրակի մարզի պատմաճարտարապետական առավել նշանակալի հուշարձաններում և բնակավայրերում՝ Ջրաձորի վաղ շրջանի ամրոցում, Հոռոմի և Բենիամինի հնավայրերում, Մարմաշենի և Հառիճավանքի վանական համալիրներում, Երերույքի տաճարում, Գուսանագյուղի ամրոցում, Անի Պեմզա բնակավայրում, ինչպես նաև Գյումրու «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոցում: Դաշտային աշխատանքների ընթացքում մասնակիցներն իրականացրին հուշարձանների տեղազննում, սխեմատիկ չափագրություններ, ճարտարապետական և վիմագրական ուսումնասիրություններ, լուսանկարահանում, փաստագրում և պահպանական խնդիրների նախնական վերլուծություն:

Ամառային դպրոցի կրթական մեթոդաբանությունը հիմնված էր հետազոտահեն ուսուցման սկզբունքի վրա: Մասնակիցները, աշխատելով խմբերով, յուրաքանչյուր փուլում ներկայացրին իրենց կատարած ուսումնասիրությունները, մասնակցեցին մասնագիտական քննարկումների, իսկ գիտական գրականության, արխիվային նյութերի, թվային աղբյուրների և արհեստական բանականության գործիքների համակցված կիրառմամբ մշակեցին պատմական կառույցների պահպանության, բարելավման և վերաօգտագործման հայեցակարգային առաջարկներ: Եզրափակիչ նիստում ներկայացվեցին Կումայրի պատմաճարտարապետական արգելոցի մի շարք արժեքավոր կառույցների պահպանության նախագծային առաջարկները՝ նաև արհեստական բանականության գործիքներով, որոնք արժանացան մասնագիտական հանձնաժողովի գնահատականին և քննարկմանը:

Ամառային դպրոցի արդյունքները վկայեցին, որ տեսական գիտելիքների, դաշտային հետազոտությունների, միջազգային փորձի և ժամանակակից թվային տեխնոլոգիաների համադրումը զգալիորեն բարձրացնում է մասնակիցների մասնագիտական պատրաստվածությունը, զարգացնում պատմաճարտարապետական ժառանգության գիտական ուսումնասիրության, փաստագրման, վերլուծության և պահպանության ոլորտներում գործնական կարողությունները, ինչպես նաև նպաստում է միջազգային գիտակրթական համագործակցության ընդլայնմանը:

Ամփոփելով իրականացված աշխատանքները՝ կարելի է արձանագրել, որ միջազգային 2-րդ ամառային դպրոցը լիովին իրականացրեց իր առջև դրված գիտակրթական նպատակներն ու խնդիրները՝ ստեղծելով արդյունավետ հարթակ մշակութային ժառանգության պահպանության բնագավառում փորձի փոխանակման, երիտասարդ մասնագետների վերապատրաստման և գիտական համագործակցության հետագա զարգացման համար:

ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

The Second International Summer School
"Architecture of Shirak from Antiquity to the Present Day"

The Second International Summer School entitled *"Architecture of Shirak from Antiquity to the Present Day"* was successfully held from **13 to 19 July 2026**. The primary objective of the programme was to bring together young researchers, architects, archaeologists, and cultural heritage professionals from Armenia and abroad to promote the study, documentation, conservation, and dissemination of the architectural heritage of the Shirak region.

The seven-day programme combined classroom instruction with extensive fieldwork, integrating theoretical education, hands-on investigation, and project-based learning. The lecture series explored the principal stages in the historical and architectural development of Shirak, spanning from antiquity to the present day. Particular attention was devoted to the architectural characteristics of the medieval and modern periods, the symbolic and conceptual framework of Armenian architecture, as well as contemporary theoretical and practical approaches to the conservation and restoration of cultural heritage.

Special lectures also presented selected international and national case studies, including conservation practices in Italy, the conservation and development concept for the settlement of Ani Pemza, the structural stabilization of the archaeological site of Zorats Karer, the restoration of the two-storey mausoleum-church of Surb Astvatsatsin at Vahanavank Monastery, together with several other completed research and conservation projects.

A major component of the Summer School consisted of field investigations conducted at some of the most significant historical and architectural sites of the Shirak Province. These included the Early Historic fortress of Jradzor, the archaeological sites of Horom and Beniamin, the monastic complexes of Marmashen and Harichavank, the Yereruyk Basilica, the fortress of Gusanagyugh, the settlement of Ani Pemza, and the Kumayri Historical and Architectural Reserve in Gyumri. During the field sessions, participants carried out on-site inspections, preliminary architectural surveys and measured drawings, architectural and epigraphic investigations, photographic documentation, systematic recording of cultural heritage assets, and preliminary assessments of conservation issues affecting the monuments.

The educational methodology of the Summer School was founded on the principles of research-based learning. Working in interdisciplinary teams, participants presented the results of each stage of their investigations, engaged in professional discussions, and developed conceptual proposals for the conservation, enhancement, and adaptive reuse of historic structures through the integrated use of scholarly literature, archival materials, digital resources, and artificial intelligence-assisted analytical tools.

During the concluding session, the participant teams presented conservation and design proposals for a number of valuable historic buildings within the Kumayri Historical and Architectural Reserve. These proposals, developed with the support of artificial intelligence tools as complementary research instruments, were evaluated and discussed by the academic review committee.

The outcomes of the Summer School clearly demonstrated that the integration of theoretical knowledge, field-based research, international professional experience, and contemporary digital technologies significantly enhances participants' professional competencies. The programme contributed to strengthening practical skills in the scientific investigation, documentation, analysis, conservation, and management of architectural heritage while simultaneously fostering international academic collaboration and interdisciplinary exchange.

In conclusion, the Second International Summer School successfully achieved its educational and scientific objectives. It established an effective platform for knowledge exchange in the field of cultural heritage conservation, advanced the professional training of emerging specialists, and created a solid foundation for future scientific cooperation, interdisciplinary research initiatives, and international academic partnerships.

13-19.07.2026

ՇԻՐԱԿԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻՑ ՄԵՐ ՕՐԵՐԸ

SHIRAK ARCHITECTURE FROM THE ANCIENT PERIOD TO THE PRESENT DAY

Միջազգային ամառային 2-րդ դպրոց

International 2nd summer school



13-19.07.2026